

Արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնություն- ԱՃԹՆ



ՆԱՐԻՆԵ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ
ԱՃԹՆ ԽՈՐՀՐԴԱՏՈՒ
ՀԱՍԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԲԱՆԿ

EITI Extractive
Industries
Transparency
Initiative

Բովանդակությունը



- Նախաբան
- Ի՞նչ է անում ԱՃԹՆ-ն և ինչն՞ է այն կարող է օգտակար լինել:
- Ի՞նչ օգուտներ կարող են ունենալ ՔՀԿ-ները ԱՃԹՆ-ից:
- Ի՞նչ կառուցվածք ունի ԲՇԿ խումբը և ո՞րն է ՔՀԿ դերը այդ խմբում:
- ԱՃԹՆ համաշխարհային օրինակներ

Ի՞նչ է ԱՃԹՆ



- ԱՃԹՆ-ն կառավարությունների, արդյունահանող ձեռնարկությունների և քաղաքացիական հասարակության միջազգային կոալիցիա է բարելավելու համար բնական ռեսուրսների կառավարման հաշվետվողականությունը և թափանցիկությունը:
- ԱՃԹՆ Ստանդարտը միջազգային ստանդարտ է, որի նպատակն է բարելավել բնական ռեսուրսներից ստացվող եկամուտների թափանցիկությունը և հաշվետվողականությունը հրապարակելով գազի, նավթի և հանքարդյունաբերության ոլորտների կազմակերպությունների կողմից վճարվող հարկերը և կառավարության կողմից ստացվող եկամուտները:
- ԱՃԹՆ-ն նախաձեռնվել է Բրիտանիայի նախկին վարչապետ Թոնի Բլեերի կողմից 2002 թվականին Յոհանեսբուրգում կայացած Կայուն զարգացում համաժողովի ժամանակ:

ԱՃԹՆ-ին օժանդակող արդյունահանող ոլորտի որոշ ներկայացուցիչներ



VOLKSWAGEN
AGTUNGSGESellschaft



mitsubishi
& MITSUBISHI MATERIALS



LONDON
MINING



GOLDLAKE
G R O U P


ԱՃԹՆ որոշ գործընկեր կազմակերպություններ



ԱՃԹՆ-ում ներգրավված քՀԿ-ներ



ԱՃԹՆ երկրների քարտեզ



Ուվքե՞ր են ԱՃԹՆ-ում (1/2)



- Ներկայում ԱՃԹՆ-ին անդամակցում են 48 երկրներ, որոնցից 31-ն ունեն Համապատասխանող երկրի կարգավիճակ, 17-ը՝ Թեկնածու երկրի:
- Համապատասխանող երկրների մեջ են Ալբանիան, Ղազախստանը, Նորվեգիան, Ինդոնեզիան և Ադրբեջանը
- Թեկնածու երկրների մեջ են Ուկրաինան, Ֆիլիպինները, Տաջիկստանը, ԱՄՆ-ն և Մեծ Բրիտանիան
- Կան երկրներ, որոնք պլանավորում են միանալ նախաձեռնությանը, դրանք են Ավստրալիան, Իտալիան, Գերմանիան և Ֆրանսիան:

Ուվքե՞ր են ԱՃԹՆ-ում (2/2)



Համապատասխանող երկրներ		Թեկնածու երկրներ	Պլանավորում են անդամագրվել
Ալբանիա	Մալի	Ավղանստան	Ավստրալիա
Ադերբեջան	Մավրիտանիա	Կոլումբիա	Ֆրանսիա
Բուրկինա Ֆասո	Մոնղոլիա	Եթովպիա	Գերմանիա
Կամերուն	Մոզամբիկ	Հոնդուրաս	Իտալիա
Չադ	Նիգեր	Մադագասկար	
Կոտ դե Իվուար	Նիգերիա	Մյանմար	
Գվատեմալա	Նորվեգիա	Պապուա Նոր Գվինեա	
Գանա	Պերու	Սան Տոմե և Պրինցիպե	
Կոնգոյի Դեմոկրատական Հանրապետություն	Կոնգոյի Հանրապետություն	Սենեգալ	
Գվինեա	Սիերա Լիոնե	Սեյշելյան կղզիներ	
Ինդոնեզիա	Տանզանիա	Սոլոմոնի կղզիներ	
Իրաք	Թիմոր- Լեստո	Տաջիկստան	
Ղազախստան	Տոգո	Ֆիլիպիններ	
Կիրգիզստան	Եմեն	Տրինիդադ և Տոբագո	
Լիբերիա	Զամբիա	Ուկրաինա	
<i>Source: www.eiti.org</i>		Մեծ Բրիտանիա	
		ԱՄՆ	

ԱՃԹՆ երկիր դառնալու քայլերը



1. Հայտ ներկայացնելու համար համապատասխանել անդամագրման պահանջներին
2. Ընդունվել որպես Թեկնածու երկիր և 18 ամիսների ընթացքում ներկայացնել առաջին ԱՃԹՆ հաշվետվությունը
3. Ձեռք բերել ԱՃԹՆ Համապատասխանող երկրի կարգավիճակ անցնելով համապատասխանության գործընթացը

ԱՃԹՆ համապատասխանության գործընթացը



ԱՃԹՆ օգուտները երկրի համար




- ԱՃԹՆ-ն բարձրացնում է ներդրողների և ֆինանսական կառույցների վստահությունը և հետաքրքրությունը երկրի նկատմամբ՝ ցույց տալով, որ կառավարությունը բաց է ու թափանցիկ
- ԱՃԹՆ-ն օգնում է Կառավարությանը ուժեղացնել հակակոռուպցիոն և թափանցիկության ծրագրերը
- ԱՃԹՆ երբեմն օգնում է բացահայտել չվճարված հարկերը
- ԱՃԹՆ-ն օգնում է ավելի լավ հասկանալ հանքարդյունաբերության արժեզրթան և գտնել նոր հնարավորություններ
- ԱՃԹՆ հաշվետվությունը թույլ է տալիս համադրել տարբեր երկրների՝ ոլորտին վերաբերող հարկային օրենսդրությունը
- ԱՃԹՆ-ն նպաստում է կառավարություն, արդյունահանող ձեռնարկություններ և ՔՀԿ երկխոսության ամրապնդմանը

ԱՃԹՆ ազդեցությունը ներդրումների ներգրավման վրա



Ներդրումների միջին հոսքը



Sources: Enhancing Foreign Direct Investment via Transparency? Evaluating the Effects of the EITI on FDI, Maya Schmaljohann, Discussion Paper Series No. 538, University of Heidelberg, January 2013, <https://eiti.org/document/enhancing-foreign-direct-investment-transparency-evaluating-effects-eiti-fdi>

Ինչո՞ւ են զարգացած երկրները անդամագրվում ԱՃԹՆ-ին (1/2)




- Այնպիսի երկրները, ինչպիսիք են ԱՄՆ-ն, Մեծ Բրիտանիան և Նորվեգիան, ունենալով արդեն կայացած տեղեկատվական և թափանցիկության համակարգ, նույնպես անդամակցում են ԱՃԹՆ-ին: Ինչո՞ւ: Քանի որ նրանք գտնում են, որ արդյունքում պետական քաղաքականությունն առավել հստակ կներկայացվի և կուժեղանա հանրության վստահությունը:
- ԱՃԹՆ-ն հնարավորություն է տալիս ներդրողներին և քաղաքացիներին **մեկ վայրում** ամբողջական տեղեկատվություն ստանալ բնական ռեսուրսների և նրանցից ստացված եկամուտների վերաբերյալ:

Ինչո՞ւ են զարգացած երկրները անդամագրվում ԱՃԹՆ-ին (2/2)



- ԱՄՆ-ն ստեղծել է www.useiti.doi.gov կայքը հնարավորություն ընձեռնելով շահառուներին ստանալ արդյունահանող ոլորտի եկամուտների, բոնուսների, ռոյալթիների և այլ ֆինանսական տեղեկատվությանը մեկ վայրում: Չնայած որ այդ ինֆորմացիան լիովին ներկայացված էր նախկինում ևս, սակայն ոլորտի մասին ամբողջական տեղեկատվություն ստանալու համար քաղաքացին կամ ներդրողը պետք է ուսումնասիրեր 10-ից ավել կայքեր:
- Այն երկրները, որտեղ պաշտոնական լեզուն որևէ միջազգային լեզու չէ, ինչպիսին Նորվեգիան է, հնարավորություն ունեն ոլորտի վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացնել անգլերեն և այն առավել հասանելի դարձնել ներդրողների համար:

Անհրաժեշտ քայլերի հնարավոր ժամանակացույցը ԱՃԹՆ-ին անդամագլխու համար



ՔՀԿ օգուտները ԱՃԹՆ-ից



- Մասնակցություն արդյունահանող ճյուղերի ֆինանսական թափանցիկության ապահովման գործընթացում
- Շահառուներին՝ բնական ռեսուրսների սեփականատերերին, առավել հստակ ինֆորմացիայի տրամադրում
- Ներդրում արդյունահանող ճյուղերի ոլորտի կարգավորման և զարգացման մեջ
- Ներգրավվածություն ոլորտի կողմից ստեղծված եկամուտների արդյունավետ բաշխման մեջ
- Հնարավորություն համագործակցել արդյունահանող ձեռնարկությունների հետ բնապահպանական և ոլորտին վերաբերող այլ թեմաներով

ՔՀԿ-ն ԱՃԹՆ-ում



- ՔՀԿ ներգրավվածությունը ԱՃԹՆ-ում ամրագրված է ԱՃԹՆ Ստանդարտով և կից արձանագրությամբ:
- ՔՀԿ-ն հանդիսանում է ԱՃԹՆ-ի անբաժանելի մասը գործընթացի բոլոր փուլերում:
- ՔՀԿ-ն առավել ակտիվ ներգրավված է ԱՃԹՆ-ում.
 1. Երկրի անդամակցության գնահատման փուլում
 2. Երկրի վավերականության հաստատման փուլում:

Բազմակողմանի շահագրգիռ կողմերի խումբ



This process is overseen by a multi-stakeholder group of governments, companies and civil society.



ՔՀԿ ներգրավվածությունը ԲՇԿ խմբում



- ԲՇԿ ներկայացուցիչներն ընտրվում են իրենց նախաձեռնությամբ
- ՔՀԿ անդամների թիվը ԲՇԿ խմբում կախված է ԲՇԿ խմբի ընդհանուր թվից (ԱՃԹՆ երկրների օրինակով ԲՇԿ անդամների թիվը տատանվում է 15-21-ի մեջ, ՔՀԿ անդամներինը՝ 3-7)
- ՔՀԿ-ները կարող են ներկայանալ կոալիցիաների տեսքով
- ԲՇԿ խմբի անդամներն ընտրվում են 3-5 տարով

Օրինակներ ԱՃԹՆ փորձից. Ղազախստան, ԱՊՀ և ԵՏՄ անդամ (1/3)



- Ղազախստանը ԱՃԹՆ-ին միացել է 2005-ին երկրի նախագահ Նազարբայևի հայտարարությամբ
- 2013 թ.-ին Ղազախստանը ստացել է ԱՃԹՆ Համապատասխանող երկրի կարգավիճակ
- Ղազախստանը ներկայացրել է ԱՃԹՆ 9 հաշվետվություն, որոնցից վերջին երկուսը 2013 թվականի նոր ստանդարտին համապատասխան
- 2008-2014 թթ. ընթացքում իրականացվել են 9 ԱՃԹՆ համաժողովներ (5 ազգային և 4 տարածքային համաժողովներ) երկրի տարբեր հատվածներում

Օրինակներ ԱՃԹՆ փորձից. Ղազախստան, ԱՊՀ և ԵՏՄ անդամ (2/3)



- Ղազախստանում արտաքին ներդրումներն աճել են 2009-ին կազմելով ՀՆԱ-ի 12%-ը ի հակադրություն 2005-ի 4.5%-ի:
- Արդյունահանող ճյուղերից ստացված հարկային եկամուտները 2011 կազմել են US\$27.8 միլիոն գերազանցելով US\$20 միլիոնով 2010-ի և US\$12 միլիոնով 2009-ի ցուցանիշները:
- ՔՀԿ-ները ակտիվորեն ներգրավված են արդյունահանող ոլորտից ստացված եկամուտները սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրերին ուղղելու գործընթացի մեջ: Այս ներգրավվածությունը կառավարության, ձեռնարկությունների և համայնքների գործունեության մեջ փոխում է երկրի տնտեսության նկատմամբ ունեցած վստահությունն ու հավատը:

Օրինակներ ԱՃԹՆ փորձից. Ղազախստան, ԱՊՀ և ԵՏՄ անդամ (3/3)



- ԲՇԿ խումբը բաղկացած է 21 անդամից
- Ներկայացված են՝ կառավարությունը, Ազգային Ժողովը, արդյունահանող ձեռնարկությունները և ՔՀԿ
- ՔՀԿ-ն ներկայացված է երկու կոալիցիաների տեսքով՝
 1. Նավթից ստացված եկամուտներ, հասարակության վերահսկողություն
 2. Ղազախստանի քաղաքացիական ալիանս
- Յուրաքանչյուր կոալիցա ունի երեքական ներկայացուցիչ
- 2012-2013 ՔՀԿ-ները ստացել են դրամաշնորհներ Համաշխարհային բանկի Բազմակողմանի Դոնորների Վստահության Հիմնադրամից ԱՃԹՆ արդյունքները երկրի տարբեր հատվածներում ներկայացնելու համար:

Օրինակներ ԱՃԹՆ փորձից. Կառավարման խնդիրներ ունեցող երկրներ



- Նիգերիայում ԱՃԹՆ ձևավորել է մասսայական քննարկումներ արդյունահանող ճյուղերից ստացվող եկամուտների վերաբերյալ, որի արդյունքում Կառավարությունը բացահայտել է շուրջ US\$443 միլիոնի թաքնված եկամուտ:
 - 2009-2011 թվականների ԱՃԹՆ հաշվետվությունների արդյունքում բացահայտվել է շուրջ US\$8.3 միլիոնի չվճարված հարկեր, որը գերազանցում է նույն ժամանակահատվածում Կառավարության կողմից կրթության ոլորտում կատարած ծախսերը:
 - Երկրի քաղաքացիները վստահում են Կառավարությանը, քանի որ Կառավարության գործողությունների արդյունքում վերականգնվում են սեփական շահի նպատակով օգտագործված գումարները ի շահ հասարակության:
- Որպես ԱՃԹՆ մասնակի արդյունքում Մոնդոլիան փոխել է իր դիրքը Թրանսփարենսի Ինթերնեյշնալի Կոռուպցիայի Ինդեքսում դառնալով 94-րդը 2012-ին ի հակադրություն 2011-ին ունեցած 120-րդ տեղի:
- Ադրբեջանը վայելում է իր նոր՝ ավելի բարձր տեղը Ֆիտչի Գնահատման համակարգում որպես ԱՃԹՆ առաջին Համապատասխան երկիր:

Օրինակներ ԱՃԹՆ փորձից.

Միջին եկամուտով երկրները ձեռք են բերում ավելին



- Գանայում ԱՃԹՆ հաշվետվությունը ցույց է տվել, որ կորպորատիվ հարկը կարող է 25 տոկոսից բարձրացվել 35-ի շարունակելով մնալ գրավիչ ներդրողների համար:
- Ջամբիայում ԱՃԹՆ գործընթացը ցույց է տվել, որ երկիրը հետ է մնում հարևան երկրներից արդյունահանող ոլորտից ստացված եկամուտների տեսանկյունից:
 - Այս ինֆորմացիայի հիման վրա մշակվել է նոր հարկատեսակ և ռոյալթիների նոր տոկոսադրույք, որը արդյունավետ կառավարման մեխանիզմների հետ համատեղ գրեթե կրկնակի ավելացրել է ոլորտից ստացվող եկամուտները:

Օրինակներ ԱՃԹՆ փորձից. Կառավարության հանդեպ քաղաքացիների վստահության աճ



- Ֆիլիպինները, որտեղ առկա է արդյունահանող ոլորտի ուժեղ օպոզիցիա, ունի լավ գործող ԲՇԿ խումբ, որը հնարավորություն է տվել հիմնական դերակատարներին քննարկել և գտնել ոլորտի բարելավման ուղիները: Հիմնական դերակատարները գտնում են, որ ստեղծելով արդյունահանող ոլորտի վերբերյալ արդյունավետ երկխոսության կայուն հիմք, իրենք կարող են մեծացնել ոլորտի ներդրումները և շարունակել օգնել համայնքներին:
- Ինդոնեզիայում ԱՃԹՆ գործընթացը բացահայտել է և օգնում է լուծել ոչ-հարկային եկամուտների, ինչպիսիք են ռոյալթիները և վարձավճարները, հետ կապված խնդիրները:

Շնորհակալություն ուշադրության համար

